ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐՎԵՍՏ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
արվեստ. թեկնածու
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ
gayanepoghosyan8787@gmail.com

ՀՏԴ՝ 372.8
DOI:10.54503/1829-4278.2023.2-166

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում «Կերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսում ուսումնասիրվող «Մահմեդական աշխարհի և Հեռավոր Արևելքի արվեստ» մոդուլային առարկայի դասավանդման մեթոդները: Առարկան ներառված է արվեստաբանական բազային կրթական ծրագրում և մյուս դասընթացների հետ կազմում է մոդուլի կարևոր բաղկացուցիչ: Կրթական ծրագրում նախատեսված է 64 ժամ դասախոսության և 86 ժամ՝ ինքնուրույն աշխատանքի կատարման համար: Դասընթացի կառուցվածքը լուսաբանող աղյուսակում ներկայացված են կիսամյակային շաբաթներում նախատեսված թեմատիկ դասընթացների ժամային բաշխումը, դասընթացի տեսակը և հանձնարարվող առաջադրանքները: Հոդվածի շրջանակում տրվում է մեկ ակադեմիական կիսամյակի համար ծրագրի հակիրճ նկարագիրը, որի նպատակն է արևելյան երկրների հին և միջնադարյան շրջանի նշանակալի ժամանակաշրջանների կերպարվեստի և ճարտարապետության ուսումնասիրությունը: Նշվում են

դասընթացի ուսուցման տարին ու կիսամյակը, դասընթացի ծրագիրն ու նպատակը, մեթոդաբանության սկզբունքները, ձևաչափը, ուսումնառության ընթացքում ուսանողներին ներկայացվող պահանջները, ավարտական աշխատանքի կառուցվածքը և հանձնարարվող հիմնական գրականությունը: Դասընթացի բովանդակությունը և հանձնարարվող գրականությունը թույլ են տալիս ուսանողներին հնարավորինս սեղմ ժամկետներում ուսումնասիրել արևելյան երկրների մշակույթը համաշխարհային կերպարվեստի պատմության կարևորագույն շրջափուլերի և պատմական անցքերի համեմատական համատեքստում: Դասընթացի վերջում կազմակերպվում է ավարտական սեմինար, որի ընթացքում ուսանողները քննարկում և վերլուծում են դասընթացի շրջանակում ուսումնասիրված երկրների մշակութային առանձնահատկությունները, տարբերությունները, միջմշակութային և կրոնական փոխազդեցությունները և այլն: Կիսամյակային գնահատականի ապահովումը կատարվում է ավարտական աշխատանքի (ռեֆերատ, էսսե, պրեզենտացիա) և հարցադրումների արդյունքներով:

Բանալի բառեր. Մահմեդական աշխարհ, Հեռավոր Արևելք, արվեստի պատմություն, կրթական ծրագիր, դասավանդման մեթոդաբանություն

Դասընթացի ծրագիրն ու նպատակը

«Կերպարվեստի պատմություն և տեսություն» կրթական ծրագրում մեծամասամբ հայ և եվրոպական արվեստի վերաբերյալ առարկայական դասընթացների համատեքստում սույն դասընթացն ունի յուրահատուկ նշանակություն: Առարկայի նպատակն է արվեստաբան ուսանողներին ծանոթացնել մահմեդական աշխարհի և Հեռավոր Արևելքի երկրների հնագույն և միջնադարյան ժամանակաշրջանների մշակութային զարգացման կարևորագույն փուլերին, կրոնա-փիլիսոփայական սկզբունքների առանձնահատկություններին, կարևորագույն հուշարձաններին, միջմշակութային փոխազդեցություններին: Կարևորվում է դասընթացի դյուրին ու մատչելի մատուցումը, ապագա արվեստաբանների մոտ մասնագիտական կողմնորոշման և աշխարհայացքների ձևավորումը, տարբեր կրոնական ավանդույթներով և պատկերա-

ցումներով ստեղծված կերպարվեստի հուշարձանների ընկալման և ուսումնասիրման ուղղորդումը:

Դասընթացի ուսումնառության ընթացքում ուսանողներից պահանջվում է՝

- *բազային գիտելիքներ ունենալ համաշխարհային և հայ կերպարվեստի պատմությունից,*
- *պատկերացումներ ունենալ մահմեդական և Հեռավոր Արևելքի երկրների աշխարհագրության և կրոնական դավանանքի վերաբերյալ,*
- *կարողանալ ընկալել և վերլուծել մշակութային առանձնահատկությունները, ճարտարապետական ու գեղարվեստական հուշարձանները,*
- *կարողանալ համեմատական ուսումնասիրություններ կատարել և ստացած գիտելիքները մասնագիտական բնագավառում կիրառել:*

Դասընթացի կազմակերպումը և մեթոդները

Ուսուցման գործընթացն իրականացվում է ինտերակտիվ կերպով՝ ներգրավելով բոլոր ուսանողներին և ստեղծելով ազատ արվեստագիտական միջավայր, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն ազատ ինքնարտահայտվելու, հարցադրումներ կատարելու և քննարկման միջոցով ամրապնդելու ստացած գիտելիքները: Դասընթացի շրջանակում թեմաների յուրացման համար հանձնարարվում են տպագիր և էլեկտրոնային հասանելի գրականություն, ֆիլմադարան, պատկերադարան՝ առավել դյուրին դարձնելու համար ուսումնառությունը: Դասընթացում ներառված թեմաների շրջանակում ուսանողներն ազատ են կիսամյակային ավարտական աշխատանքի կատարման ընտրության հարցում, հնարավորություն ունեն հանձնարարված թեմայի շրջանակն ընդլայնելու ըստ իրենց նախասիրության: Խրախուսվում է ուսանողների կողմից համակարգչային բազային գիտելիքների կիրառությունը արվեստաբանական հետազոտություններում, որոնց շնորհիվ կիսամյակի ավարտին ներկայացվում են պրեզենտացիոն նյութեր, որոնք ևս ենթարկվում են դասախոս-ուսանող ինտերակտիվ քննարկման: Հարց ու պատասխանների, մասնագիտական բանավեճերի շնորհիվ

կատարվում է արդյունքների եզրահանգում: Մեկ ուսումնական կիսամյակի ընթացքում ուսանողներին մատուցվում է դասընթացի վերաբերյալ հիմնարար արվեստագիտական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ է զարգացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքով: Յուրաքանչյուր դասից հետո դասախոսը բավական հարուստ և հասանելի գրականության ցանկ է տրամադրում, հոդվածներ, գրքեր, էլեկտրոնային աղբյուրներ և այլն: Ժամանակաշրջանի պահանջներից ելնելով՝ ուսանողներին հնարավորություն է տրվում նյութի մատուցումը առավել մատչելի դարձնել լուսանկարների, գծապատկերների և վավերագրական հետաքրքրաշարժ ֆիլմերի ցուցադրմամբ: Արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է դասախոսի բանավոր խոսքի համադրումը համապատասխան պատկերների հետ: Ինտերակտիվ ձևաչափը, ինչպես նաև հաճախակի խմբային աշխատանքները մոտիվացնում են ուսանողների ուսուցումը՝ ավելի հետաքրքիր ու մասնակցային դարձնելով այն: Դասընթացի կազմակերպման համար նախընտրելի է համարվում դասընթացի շրջանակում ներառված երկրների արվեստի պատմության ուսումնասիրությունը սկսել հնադարից, համաշխարհային կերպարվեստի պատմության կարևորագույն շրջափուլերի և պատմական անցքերի համեմատական համատեքստում՝ ամրապնդելու համար այս կամ այն երկրի մշակութային նմանությունները, տարբերություններն ու փոխազդեցությունները:

- Լսարանային դասընթացի կազմակերպման համար կիրառվում են անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, որոնց օգնությամբ թեման իր համապատասխան տեսողական նյութերով (թվային-տեսողական նյութեր, գրքային վերատպություններ, լուսանկարներ, տեսաֆիլմեր, համացանցային նյութեր, գրքեր, հոդվածներ) ներկայացվում է ուսանողներին: Լսարանային դասընթացը ուղեկցվում է թեմատիկ քննարկումներով, բանավեճերով:
- Յուրաքանչյուր դասընթացի վերջում ուսանողներին տրվում է թեմային համապատասխան համառոտ նյութը, գրականության ցանկը, համացանցից օգտվելու համար անհրաժեշտ հղումները, տպագիր կամ PDF ձևաչափով գրքեր և հոդվածներ ինքնուրույն ուսումնասիրության համար:
- Ինքնուրույն ուսումնասիրության գործում ուսանողներն ազատ

են նաև հանձնարարված գրականությունից բացի օգտվելու իրենց նախասիրած նյութերից և հետազոտություն կատարել: Ինքնուրույն աշխատանքը ներառում է արվեստի պատմության վերաբերյալ մատենագիտության կազմում, համացանցային նյութերի փնտրում, հավաքագրված տեղեկությունների ամփոփում, վերլուծական ինքնուրույն աշխատանքի կատարում, ընթացիկ դասընթացի կամ սեմինարի շրջանակում դասախոսի և ուսանողների հետ արդյունքների քննարկում: Պարտադիր է համարվում արվեստաբանական գիտական հոդվածների ուսումնասիրությունը, թեմային առնչվող վերջին հետազոտությունների հետ ծանոթանալը:

- Դասընթացի ավարտին նախատեսված են այցելություններ Երևանում գտնվող թանգարաններ, ցուցասրահներ և մշակութային կենտրոններ (Հայաստանի ազգային պատկերասրահ, Միջին Արևելքի արվեստի թանգարան, Երևանի Կապույտ մզկիթ և այլն):

Դասընթացի կառուցվածքը «Կերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսում դասընթացի կազմակերպման համար նախատեսված է 64 ժամ դասախոսության և 86 ժամ՝ ինքնուրույն աշխատանքի կատարման համար: Դասընթացի կառուցվածքը լուսաբանող աղյուսակում ներկայացված են կիսամյակային շաբաթներում նախատեսված թեմատիկ դասընթացների ժամային բաշխումը, դասընթացի տեսակը և հանձնարարվող առաջադրանքները:

Դասընթացի թեմա	Կիսա-մյակ	Շաբաթ	Դասընթացի տեսակ	Առաջադրանք
Թեմա 1 *Ներածություն, ընդհանուր ծանոթություն: Աքեմենյան Պարսկաստանի գեղարվեստական մշակույթը*	*2*	*1*	*Լսարանային դասընթաց,* *4 ժամ*	*Գրականության ուսումնասիրում,* *վավերագրական ֆիլմերի դիտում*
Թեմա 2 *Սասանյան Պարս-կաստանի գեղար-վեստական մշա-կույթը*	*2*	*2*	*Լսարանային դասընթաց* *4 ժամ*	*Գրականության ուսումնասիրու-թյուն* *վերլուծական աշխատանք,* *վավերագրական ֆիլմերի դիտում*
Թեմա 3 *Իրանի միջնադա-րյան մահմեդական արվեստի գեղար-վեստական նկարա-գիրը*	*2*	*3*	*Լսարանային դասընթաց* *4 ժամ,* *թեմայի քն-նարկում, եզ-րահանգում-ներ:*	*Գրականության ուսումնասիրու-թյուն,* *վերլուծական աշ-խատանք,* *վավերագրական ֆիլմերի դիտում*

Թեմա 4–6 *Մահմեդական Եգիպտոսի մշակույթը* *Աբբասյան խալիֆաթի ճարտարապետությունը* *Միջնադարյան Սիրիայի ճարտարապետությունը* *Մահմեդական Իսպանիայի մահմեդական մշակույթը*	*2*	*4–6*	*Լսարանային դասընթաց 6 ժամ։ Թեմայի քննարկում, եզրահանգումներ*	*Գրականության ուսումնասիրություն,* *վերլուծական աշխատանք,* *վավերագրական ֆիլմերի դիտում*
Թեմա 7 *Հնագույն Չինաստանի մշակութային առանձնահատկությունները, աշխարհայացքը, հոգևոր պատկերացումները։* *Ընդհանուր ծանոթություն (մ.թ.ա.4-րդ հազ.-մ.թ. 3-րդ դար)*	*2*	*7*	*Լսարանային դասընթաց 4 ժամ*	*Գրականության ուսումնասիրություն*

Թեմա 8 *Ցին և Հան կայսրությունների մշակույթը (մ.թ.ա. 221-206 թթ. և մ.թ.ա. 206- մ.թ. 9 դ.)*	*2*	*8*	*Լսարանային դասընթաց 4 ժամ*	*Գրականության ուսումնասիրություն,* *վերլուծական աշխատանք,* *վավերագրական ֆիլմերի դիտում*
Թեմա 9 *Կերպարվեստը Չինաստանում (4-7-րդ դդ.),վեց կայսրությունների ժամանակաշրջան*	*2*	*9*	*Լսարանային դասընթաց 4 ժամ*	*Գրականության ուսումնասիրություն,* *վերլուծական աշխատանք,* *վավերագրական ֆիլմերի դիտում*

Թեմա 10-11 Տան ժամանակաշրջանի մշակույթը Չինաստանում (618-907թթ.) Սուն ժամանակաշրջանի մշակույթը Չինաստանում (960-1279թթ.) Մին դինաստիայի ժամանակաշրջանի մշակույթը Չինաստանում (1368-1644թթ.): Ցին ժամանակաշրջանի մշակույթը Չինաստանում (1644-1912թթ.)	2	10-11	Լսարանային դասընթաց 8 ժամ թեմայի քննարկում, եզրահանգումներ	Գրականության ուսումնասիրություն, վերլուծական աշխատանք, վավերագրական ֆիլմերի դիտում
Թեմա 12-14 Ճապոնիայի հնագույն մշակույթը: Ջոմոն մշակույթի առանձնահատկությունները (մ.թ.ա. 4-րդ հազ. -մ.թ. 3-րդ դ.) Մշակույթը Ճապոնիայում Յայոյ, Ասուկա, Նարա, Խեյան, Կամակուրա, Մուրոմատի, Մոմոյամա, Էդո ժամանակաշրջաններում (3-19-րդ դդ.)	2	12-13	Լսարանային դասընթաց 12 ժամ թեմայի քննարկում, եզրահանգումներ	Գրականության ուսումնասիրություն, վերլուծական աշխատանք, վավերագրական ֆիլմերի դիտում

Թեմա 15–17 *Հնդկաստանի հնագույն մշակույթը: Հարապպյան մշակույթ: Հնդկաստանի գաճարային ճարտարապետության առանձնահատկությունները* *Հնդկական քանդակագործություն* *Քարանձավային արվեստը Հնդկաստանում: Որմնանկարչության առանձնահատկությունները* *Մողոլական ժամանակաշրջանի արվեստը Հնդկաստանում*	*2*	*14–16*	*Լսարանային դասընթաց* *12 ժամ* *թեմայի քննարկում, եզրահանգումներ*	*Գրականության ուսումնասիրություն,* *վերլուծական աշխատանք,* *վավերագրական ֆիլմերի դիտում*

Դասընթացի բովանդակության նկարագիր

Թեմա 1

Դասընթացի ներածության շրջանակում իրականացվում է Իրանի ընդհանուր զեղարվեստական մշակույթի հետ ծանոթություն, ներկայացվում են աշխարհագրական ու պատմական կարևոր տվյալները, կրոնական դավանանքի պատմական շրջափուլերը, հոգևոր մշակույթի ազդեցությունը արվեստի ձևավորման վրա: Դասընթացը ներկայացնում է Պարսկաստանում Աքեմենյան կայսրության (մ.թ.ա.6–4–րդ դդ.) զեղարվեստական մշակույթի ձևավորման ընթացքը, մշակութային փոխազդեցությունները, կարևորագույն հուշարձանները (ճարտարա-

պետություն, քանդակագործություն): Խորապես ուսումնասիրվում են հատկապես Պասարգադ և Պերսեպոլիս աքեմենյան մայրաքաղաքների հնությունները, Կյուրոս Մեծ արքայի դամբարանի ճարտարապետական նկարագիրը (մ.թ.ա. 6–4-րդ դդ.), ճարտարապետական և քանդակագործական տարբեր հուշարձանների պահպանված օրինակները:

Թեմա 2

Դասընթացի առանցքում ներկայացվում է Սասանյան Պարսկաստանի (3–7-րդ դդ.) գեղարվեստական մշակույթը, կերպարվեստի հուշարձանները: Անդրադարձ է կատարվում կերպարվեստում դիցաբանական և գրական կերպարների գեղարվեստական բնութագրին: Ուսումնասիրության շրջանակում կարևորվում է Սասանյան ժամանակաշրջանի դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշների քննությունը: Ուսանողների հետ կատարվում է Սասանյան գեղարվեստական ոճի, առանձնահատկությունների արվեստաբանական վերլուծություն, քննարկում: Մեծ ուշադրություն է դարձվում Աքեմենյան և Սասանյան Պարսկաստանի կոթողային արվեստի հուշարձաններին (Նախշե Ռուստամ, Թաքե Բոստան ժայռափոր բարձրաքանդակները և այլն):

Թեմա 3

Դասընթացի շրջանակում ներկայացվում է Իրանի միջնադարյան մահմեդական շրջանի կարևորագույն հուշարձանները: Ուսումնասիրվում են իրանական մանրանկարչությունը (Թավրիզի, Սպահանի, Հերաթի մանրանկարչության դպրոցներ), դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները, ճարտարապետության և քանդակագործության հայտնի հուշարձանները: Ուսանողներին հանգամանալից ներկայացվում է մզկիթների ճարտարապետության առանձնահատկությունները, կրոնական ավանդույթները կոթողային արվեստում:

Թեմա 4–6

Դասընթացի շրջանակում ուսանողներին ներկայացվում է մահմեդական Եգիպտոսի (պալատական համալիրներ, մզկիթներ), Օմեյադների և Աբբասյանների խալիֆաթի ճարտարապետությունը, միջնադարյան Սիրիայի, Իսպանիայի մահմեդական մշակույթի կարևորագույն հուշարձանները, պատմական իրողությունները: Քննության են

դրվում Իսպանիայում մահմեդական ճարտարապետական կառույցները և դրանց առանձնահատկությունները (Կորդովայի մզկիթները, Ալհամբրայի պալատական համալիրը և այլն):

Թեմա 7–11

Դասընթացի հաջորդ հատվածը նվիրված է Հեռավոր Արևելքի երկրների արվեստի պատմությանը: Մեկ կիսամյակ ուսումնառության ծրագրում հիմնականում ներառված են Չինաստանի և Ճապոնիայի արվեստի պատմության ընդհանուր նկարագիրը: Ձրույցների ընթացքում նաև անդրադարձ է կատարվում Կորեայի մշակույթին: Ներածական հատվածում քննության է դրվում հնագույն Չինաստանի մշակութային պատմությունը: Դասընթացի շրջանակում ուսումնասիրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակից մինչ 19-րդ դարն ընկած ժամանակաշրջանում Չինաստանի մշակութային կյանքում տեղի ունեցած իրադարձությունները, արվեստի ձևավորման փուլերը: Ուսանողները ծանոթանում են Չինաստանում հազարամյակների ընթացքում ստեղծված արվեստի բազմաթիվ հուշարձաններին, որոնք արտացոլում են բնության հանդեպ չինացիների սերն ու բանաստեղծական ընկալումը: Կարևորվում է Չինաստանի կրոնափիլիսոփայական հոգևոր պատկերացումների ձևավորումն ու զարգացումը: Չինաստանի երեք կարևորագույն հոգևոր ուսմունքների՝ դաոսիզմի, կոնֆուցիականության և բուդդիզմի դերը և ազդեցությունը արվեստի տեսակների վրա: Ուսումնասիրվում է հնագույն Ցանշաո մշակույթի (մ. թ. ա. 5–3-րդ հազ.) խեցեղենը, Չժոու մշակույթի (մ.թ.ա. 1045–221 թթ.) բրոնզյա դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները, Ցին Շիհուանդի կայսերական դամբարանը (մ.թ.ա. 3-րդ դ.), չինական Մեծ պատի ճարտարապետությունը, միջնադարյան գեղանկարչության առանձնահատկություններն ու ժանրային տարբերակումները, տաճարային ու պալատական համալիրները, քանդակային հուշարձանները և այլն:

Թեմա 12–14

Դասընթացը նվիրված է ճապոնական մշակույթի հուշարձանների քննությանը: Ուսանողներին ներկայացվում է Ճապոնիայի արվեստի ձևավորման ակունքները, կերպարվեստի առավել ծաղկման փուլը ֆեոդալական ժամանակաշրջանում, որը շարունակվել է մինչ 19-րդ դարակես: Քննության է դրվում ճապոնական միջնադարյան արվես-

տի զարգացման վրա կորեական և հատկապես չինական արվեստի ազդեցությունը: Ճապոնական արվեստի ընկալմանը նպաստում է նաև հոգևոր պատկերացումների և կրոնական սկզբունքների իմացությունը: Հատկանշական է սինտոիզմի և բուդդիզմի ազդեցությունը ճապոնական արվեստի զարգացման վրա, որը ճապոնացիները որդեգրել են 6-րդ դարում: Տաճարական ճարտարապետության ուսումնասիրությունների մեջ կարևորություն է հատկացվում Խորյու-դզի տաճարային համալիրի ուսումնասիրությանը: Ուսումնասիրվում են Կիոտո քաղաքի արվեստի կարևոր հուշարձանները: Հատկանշական է նաև Ռեան-դզի, Կաննոն և Թոսյոգու տաճարային համալիրների ուսումնասիրությունը:

Թեմա 15-17

Դասընթացի ծրագրում ներառված է նաև հնդկական արվեստի պատմության ուսումնասիրությունը: Հնդկական մշակույթը հազարամյակների ընթացքում ձևավորել է մշակութային հարուստ նկարագիր: Դասընթացի ընթացքում ուսանողներին ներկայացվում է հնագույն Հնդկաստանի՝ Հարապպյան քաղաքակրթության (մ.թ. ա. 4-2-րդ հազ.), Մաուրյան դինաստիայի (մ.թ.ա. 4-2-րդ դդ.), Քուշանների թագավորության (1-4-րդ դդ.), Գուպտյան (4-6-րդ դդ.) կայսրության ժամանակաշրջանների և մահմեդական Հնդկաստանի (13-17-րդ դդ.) մշակույթի պատմությունը:

Դասընթացի առաջադրանքներ

Դասընթացի վերջում կազմակերպվում է ավարտական սեմինար, որի ընթացքում ուսանողները քննարկում և վերլուծում են դասընթացի շրջանակում ուսումնասիրված երկրների մշակութային առանձնահատկությունները, տարբերությունները, միջմշակութային և կրոնական փոխազդեցությունները: Դասընթացն ավարտելու կիսամյակային գնահատականի ապահովումը կատարվում է ավարտական աշխատանքի (ռեֆերատ, էսսե, պրեզենտացիա) և հարցադրումների արդյունքներով: Առաջադրանքների թեմաները ուսանողներին հանձնարարում է դասախոսը, սակայն ցանկության դեպքում ուսանողները կարող են դասընթացի շրջանակում իրենց նախընտրությամբ հետազոտել ցանկացած թեմա՝ նախապես համաձայնեցնելով դասախոսի

հետ: Աշխատանքի կատարման համար ընդունելի է առնվազն 10 միավոր գրականություն:

Դասընթացի ավարտական աշխատանքի կառուցվածքում ուսանողը պետք է՝

- ներածական հատվածում ներկայացնի ընտրված թեմայի խնդիրն ու նպատակը,
- բովանդակային հատվածում ինքնուրույն մասնագիտական վերլուծությամբ ներկայացնի հիմնական նյութը,
- կատարի եզրահանգումներ,
- աշխատանքում ներկայացված տեղեկությունները պետք է ուղեկցվեն համապատասխան հղումներով՝ ըստ օգտագործած գրականության ցանկի կամ էլեկտրոնային աղբյուրների,
- վերջում անհրաժեշտ է կցել հավելված (լուսանկարներ, աղյուսակներ, հատակագծեր և այլն),
- աշխատանքի նախընտրելի ծավալը՝ 6–10 էջ:

Առաջադրանքների թեմաների օրինակներ

- Հնդկաստանի մանրանկարչության դպրոցները
- Ժայռափոր տաճարային համալիրները Հնդկաստանում
- Դոգու արձանիկները. տիպերն ու ոճական առանձնահատկությունները (Ճապոնիա)
- Ալհամբրա ճարտարապետական համալիրը Գրանադայում (Իսպանիա)
- Դամասկոսի Օմեյադների մզկիթի ճարտարապետական նկարագիրը (Սիրիա)
- Սպահանի մզկիթները (Իրան)
- Պարսկական մանրանկարչության դպրոցները
- Թաջ-Մահալի ճարտարապետական նկարագիրը (Հնդկաստան)
- Յանշաո մշակույթի խեցեղենը (Չինաստան)
- «Դին» բրոնզյա ծիսանոթների գեղարվեստական հարդարանքը (Չինաստան)

- «Լեռներ և ջրեր» գեղանկարչական ժանրի բնութագիրը (Չինաստան)
- Էլլորա ժայռափոր համալիրի քանդակային հորինվածքները (Հնդկաստան)
- Աջանտայի որմնանկարները (Հնդկաստան)

Դասընթացի ուսումնասիրության համար հանձնարարվող գրականություն

1. **Աղասյան Ա.**, *Արվեստի պատմություն, Կերպարվեստ,* Գիրք 1, Երևան, «Արմավ» հրատ., 2020:
2. **Арапова Т.**, *Китайский фарфор в собрании Эрмитажа*, Москва, «Аврора», 1977.
3. **Баженов В.**, *Искусство Японии*, Москва, Изд. «Аст», 2021.
4. **Баркова А.**, Китайская поэзия и китайская живопись: путь от чиновника к отшельнику, *Искусство как способ познания*, Материалы конференции, Москва, 1999.
5. **Белозерова В.**, Анатомия традиционной китайской живописи, *Общество и государство в Китае*, т. 45, ч. 2 (ред. А.И. Кобзев и др.), Москва, Институт востоковедения Российской академии наук, 2015, с. 342–370.
6. **Белозерова В.,** *Икусство китайской каллиграфии*, Москва, Изд. РГГУ, 2007.
7. **Бертельс А.**, *Художественный образ в искусстве Ирана IX–XV вв.*, Москва, Изд. «Восточная литература», 1997.
8. **Бонгард-Левин Г.**, *Древняя Индия. История и культура*, Санкт-Петербург, «Алетейя», 2001.
9. **Васильева О.**, *Нить жемчуга. Иранское книжное искусство XIV–XVIII веков в собрании Российской национальной библиотеки*, Санкт-Петербург, Изд. РНБ, 2008.
10. **Вахтин Б., Карлина Р., Кроль Ю.**, *Страна Хань: Очерки о культуре древнего Китая*, Москва, Госизд. детской литературы, 1959.

11. **Веймарн Б.**, *Искусство арабских стран и Ирана VII–XVII веков*, Москва, «Искусство», 1960.

12. **Вигасин А.,** *История и культура древней Индии*, Москва, Изд. МГУ, 1990.

13. **Виноградова Н.**, *Горы и воды: Китайская пейзажная живопись*, Москва, «Белый город», 2011.

14. **Виноградова Н.**, **Николаева Н.**, *Малая история искусств. Искусство стран Дальнего Востока*, Москва, «Искусство», 1979.

15. **Виноградова Н.**, *Скульптура Японии III–XIV вв.*, Москва, «Изобразительное искусство», 1981.

16. **Воронина В.**, *Средневековый город арабских стран*, Москва, Изд. ВНИИТАГ Госкомархитектуры, 1991. (Всесоюзный научно-исследовательский институт теории архитектуры и градостроительства)

17. *Всеобщая история архитектуры* (в 12-ти томах), т. 1, 9, Ленинград-Москва, Изд. литературы по строительству, 1970 и 1971.

18. **Глухарева О.**, Из истории китайского народного искусства, *Советская этнография*, 1953, 1, с. 137-152.

19. **Глухарева О.**, *Искусство Кореи. С древнейших времен до конца XIX века*, Москва, «Искусство», 1982.

20. **Грабар О.**, *Формирование исламского искусства*, Москва, Изд. «Садра», 2016.

21. **Гришина К.**, Анализ традиционной китайской живописи и европейской, Язык и культура, *Сборник статей XXVII Международной научной конференции*, Томск, Изд. Томского государственного университета, 2017, с. 230-244.

22. **Гусева Н.**, *Индуизм*, Москва, Изд. «Наука», 1979.

23. **Дандамаев М., Луконин В.**, *Культура и экономика древнего Ирана*, Москва, «Наука», 1980.

24. **Денике Б.**, *Живопись Ирана*, Изд. «Искусство», Москва, 1938.

25. **Завадская Е.**, *Японское искусство книги VII–XIX вв.*, Москва, Изд. «РИП–Холдинг», 2014.

26. **Изнага С.**, *История японской культуры*, Москва, Изд. «Прогресс», 1972.

27. *Индийские линиатюры XVI–XVIII вв.. Альболи,* Москва, Изд. «Наука», 1971.

28. **Иофан Н.**, *Культура древней Японии*, Москва, Изд. «Наука», 1974.

29. **Вигасин А., Дандамаев М. и др.**, *История древнего Востока: Учебное пособие*, (под ред. В. И. Кузищина), Москва, «Высшая школа», 1988.

30. **Каптерева Т.**, *Искусство Испании*, Москва, «Изобразительное искусство», 1989.

31. **Коротская А.**, *Архитектура Индии раннего средневековья*, Москва, Изд. литературы по строительству, 1964.

32. **Кравцова М.**, *История культуры Китая*, Санкт–Петербург, «Лань», 1999.

33. **Кречетова М., Вестфален Э.**, *Китайский фарфор*, Ленинград, Изд. ГЭ, 1947.

34. **Луконин В.**, *Искусство древнего Ирана*, Москва, «Искусство», 1977.

35. **Мюллер А.**, История ислама: от доисторической истории арабов до Аббасидов, Москва, Изд. «АСТ», 2004.

36. **Николаева Н.**, *Малая история искусств, История искусство стран Дальнего Востока*, Москва, «Искусство»,1979.

37. **Ольденбург С.**, *Культура Индии*, Москва, Изд. «Едиториал УРСС», 2020.

38. **Орбели И.**, **Тревер А.**, *Сасанидский металл*, Москва–Ленинград, «Академия», 1935.

39. **Орнатская Л.**, **Тульпе И.**, Исламское искусство: Культурологический аспект исследования, *Studia Culturae*, вып. 3 (29), 2016, с. 28–39.

40. *Очерки истории арабской культуры V–XV вв.*, Москва, Изд. «Наука», 1982.

41. *Палятники культуры Сасанидского Ирана* (под. ред. Р.Кинжаловв, В. Луконина, Г.Терентьева), Ленинград, Изд. ГЭ, 1960.

42. **Пиотровский М.**, *О лусульлянсколи искусстве*, Санкт–Петербург, «Славия», 2001.

43. **Раппопорт И.**, *Художественная кералика средневекового Ирана*, Ленинград, Изд. ГЭ, 1971.

44. **Роули Д.**, *Принципы китайской живописи*, Москва, Изд. «Наука», 1989.

45. **Саид Н.**, *Ислалиское искусство и духовность*, Москва, «Феория», 2009.

46. **Тревер К., Луконин В.**, *Сасанидское серебро: Художественная культура Ирана III –VIII веков: Собрание Государственного Эрлиитажа*, Москва, «Искусство», 1987.

47. **Сидорова В.**, *Скульптура Древней Индии*, Москва, «Искусство», 1971.

48. **Соколов–Ремизов С.**, *От Средневековья к Новолу вреллени: из истории и теории живописи Китая и Японии конца XVII – начала XX в.*, Москва, Государственный институт искусствознания, 1995.

49. **Талаи Х.**, *Археология и искусство Ирана в I тысячелетии до н.э.*, Москва, Изд. «Вече», 2011.

50. **Тюляев С.**, *Искусство Индии III тыс. до н.э. – VII в. н. э.*, Москва, «Искусство», 1988.

51. **Тюляев С.**, *Искусство Индии*, Москва, Изд. «Наука», 1968.

52. **Уотт У., Какиа П.**, *Мусульлианская Испания*, Москва, Изд. «Наука», 1976.

53. **Фрай Р.**, *Наследие Ирана*, Москва, «Восточная литература», 2002.

54. **Фэн Ю.**, *Краткая история китайской философии*, Санкт-Петербург, «Евразия», 1998.

55. **Хань Ю.**, Статус и роль женщины в изобразительном искусстве Китая: Под воздействием давления, *Культурология и искусствоведение*, 2012, с. 128-132.

56. **Ченг Ц.**, *Теория искусства китайской расписной керамики*, Ланьчжоу, Народное издательство Ганьсу, 2008.

57. **Чжижун Ч.**, *Философия китайского искусства*, Москва, Изд. «Восточная литература», 2021.

58. **Шукуров Ш.**, *Искусство средневекового Ирана. Формирование принципов изобразительности*, Москва, Изд. «Наука», 1989.

59. **Элиаде М., Кулиано И.**, *Словарь религий, обрядов и верований*, Москва, Изд. «Академический проект», 2014.

60. **Curatola G., Scarcia G., Shore M.**, *The art and architecture of Persia*, Abbeville Press, 2007.

61. **Ferrier R.**, *The Arts of Persia*, Yale University Press, 1989.

62. **Goswamy B.**, *The spirit of Indian painting: Close encounters with 100 great works, 1100-1900*, Penguin, 2014.

63. **John M.**, *The Terra Cotta army: China's first Emperor and the Birth of a Nation*, Da Capo Press, 2009.

64. **Mitter P.**, *Indian Art*, Oxford University Press, 2001.

65. **Swann P.**, *Art of China, Korea and Japan*, "Henry Holt & Company", 1975.

66. **Swann P.**, *The art of Japan: From the Jomon to the Tokugawa period* (revised edition), Greystone Press, 1966.

THE TEACHING METHODOLOGY OF THE COURSE "ART OF THE ISLAMIC WORLD AND THE FAR EAST" IN THE STATE ACADEMY OF FINE ARTS OF ARMENIA

GAYANE POGHOSYAN
PhD in Art History
State Academy of Fine Arts of Armenia
Institute of Arts, NAS RA

Abstract

The article presents the teaching methodology of the modular course "Art of the Islamic World and the Far East" according to the educational program of the 3rd year of a bachelor's degree in the specialty "History and Theory of Fine Arts" of the State Academy of Fine Arts of Armenia. The program of the discipline, with other subjects, forms an important component of the educational basis of the module. This course includes 64 hours of lecture attendance, and 86 hours of an independent study. The table provides an overview of the structure and distribution of thematic lectures by semester, along with the assigned tasks. This article briefly introduces the features of the program the educational goal of which is to acquaint students, during one semester, with the most important pages in the history of the ancient and medieval culture, architecture and art of the countries of the East. It includes the methodological principles, format specifications, paper structure, and main literature of a one-semester course. This content allows students to quickly explore cultural similarities, differences, and interactions between countries in the comparative context of the most important periods and historical gaps. At the end of the semester, a final seminar will be held to discuss and analyze the cultural characteristics, differences, and cross-cultural and religious interactions of the Eastern countries studied within the discipline. Semester assessment is carried out using practical assignments (summaries, essays, presentations) and questions.

Keywords: Islamic world, Far East, art history, educational program, teaching methodology

МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ КУРСА «ИСКУССТВО ИСЛАМСКОГО МИРА И ДАЛЬНЕГО ВОСТОКА» В ГОСУДАРСТВЕННОЙ АКАДЕМИИ ХУДОЖЕСТВ АРМЕНИИ

ГАЯНЕ ПОГОСЯН
канд. искусствоведения
Государственная академия художеств Армении
Институт искусств НАН РА

Резюме

В статье представлена методика преподавания модульного курса «Искусство исламского мира и Дальнего Востока» по образовательной программе 3-го курса бакалавриата по специальности «История и теория изобразительного искусства» в Государственной академии художеств Армении. Дисциплина включена в базовую программу модуля и вместе с другими предметами является важной составляющей образовательной программы. Программой дисциплины предусмотрены 64 часа лекций и 86 часов самостоятельной работы. В таблице показаны структура дисциплины, распределение тематических лекций по семестровым неделям и поставленные задачи. В рамках статьи представлена краткая характеристика программы, образовательной целью которой является последовательное изучение в течение одного академического семестра важнейших страниц истории древней и средневековой художественной культуры стран Востока, знакомство с их архитектурой и изобразительным искусством. Указываются год и семестр, программа и цель курса, принципы методики, формат, требования, предьявляемые к студентам во время обучения, структура итоговой работы и предлагаемая литература. Содержание позволяет студентам в кратчайшие сроки изучить культурные сходства, различия и взаимодействия стран в сравнительном контексте важнейших периодов и исторических пробелов в истории мирового изобразительного искусства. По окончании курса организуется итоговый семинар, в ходе которого

студенты обсуждают и анализируют культурные особенности, различия, межкультурные и религиозные взаимодействия восточных стран. Семестровая оценка осуществляется на основании практических заданий (реферат, эссе, презентация) и вопросов.

Ключевые слова: Исламский мир, Дальний Восток, история искусства, образовательная программа, методика преподавания

Ընդունվել է՝ 02.11.2023
Գրախոսվել է՝ 20.11.2023
Հանձնվել է տպ.՝ 12.03.2024